

Վ. Ա. Դիլյան

ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

(Հիմնադրման 150-ամյակի առթիվ)

Հայ մշակույթի պատմության մեջ իր ուրույն ու անխամբելի տեղն ունի Լազարյան ճեմարանը: Հանդիսանալով հայ ազգային զարթոնքի ամենանշանավոր արտահայտություններից մեկը, Լազարյան ճեմարանը շուրջ մի ամբողջ հարյուրամյակ մեծապես խթանեց հայ մշակույթի զարգացմանը, եղավ բարի սերմնացան, որի ցանած հունդերը ծաղկեցին ու պտղաբերեցին ամենուր. որտեղ հնչում էր հայկական խոսքը:

Լազարյան ճեմարանն անհրաժեշտ ծնունդն էր մի ժամանակաշրջանի, երբ ազգային ինքնագիտակցության գալով և կազմակերպված հասարակական ուժ դառնալով, հայ առևտրական բուրժուազիան սկսեց ձգտում արտահայտել դեպի լուսավորությունը, գիտելիքների տարածումը: Ընդ եթե նոր ժամանակաշրջանի հայկական մշակույթը իր ծաղկումն ու զարգացումն ապրեց հետավոր հայ զաղթավայրերում, որտեղ տիրապետող դիրքեր էր գրավում հայ առևտրական բուրժուազիան, ապա դա ապացույցն էր այն բանի, որ լուսավորության դրոշմն արդեն անցնում էր վերջինիս ձեռքը:

Ուստի սխալվում են այն հետազոտողները, ովքեր Լազարյան ճեմարանն համարում են ցարական կառավարության թելադրանքով հիմնադրված մի հաստատություն, որը կոչված էր ծառայելու ցարիզմի քաղաքական նպատակներին: Ճեմարանի մեկդարյան պատմությունը ցույց է տալիս, որ այն եղել է անդուռ ու համառ պայքար կառավարության կողմից նրա ազգային բնույթին սպառնացող և այն խաթարող բոլոր ոտնձգությունների դեմ: Ճեմարանի պատմությունը եղել է մի կողմից հայ ազգային ոգու, մյուս կողմից այն արմատախիլ անելու զույգ հակադիր տենդենցների անընդմեջ պայքար:

Լազարյան ճեմարանը երախայրիքն էր հայ ժողովրդի պատմության մեջ քաջ հայտնի Լազարյան տոհմի: Լազարյանները և նրանցից հատկապես Հովհաննես և Հովակիմ զույգ եղբայրները մեծ դեր են խաղացել ոչ միայն հայ ազատագրական շարժման պատմության մեջ, այլև իրենց գործունեության սկզբնական շրջանից էլ մեծ նշանակություն և կարևոր դեր են վերապահել կրթական դործին, համոզված լինելով, որ ազգային զարգացման և ինքնապահպանման հիմնական աղբյուրը՝ լուսավորությունն է: Լուսավորության միջոցով է, որ հայ ժողովուրդը, դուրս գալով դարավոր թմբիրից ու տգիտությունից, պետք է հաղորդակից դառնար ժամանակի առաջավոր քաղաքակրթությանը: Այդ էր պատճառը, որ նրանք խիստ մեծ նշանակություն էին տալիս օտար լեզուների և բնական դիտությունների դասավանդմանն ու յուրացմանը:

Մոսկվայում հայկական դպրոցի հիմնադրման մտահղացումը պատկանում է Հովհաննես Լազարյանին: Դեռևս ճեմարանի հիմնադրումից երեսուն տարի առաջ, 1785 թ. մայիսի 14-ին, նա իշխան Լվովին ներկայացրած երկտողում հետևյալն էր գրում. «Գանձարանի հետ պարտավորություններս ավար-

տելուց հետո, եթե հանկարծական մի դիպվածով չքայքայվի կարողությունն իմ, ցանկություն ունեմ սկսել տարեցտարի մինչև 200 000 ռուբլի կապիտալ հոգեմ¹։

Այդ իսկ նպատակով էլ նա մի քանի տարի անց բանակցությունների մեջ է մտնում Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադիր և աբբաճայր Աստվածատուր արքեպիսկոպոս Բաբկյանի հետ, որպեսզի վերջինիս օգնությամբ և ղեկավարությամբ կառուցի Քրիստոսական ուսումնարան մի՝ վասն հայկասեռ նրբամիտ բանասէր մանկանց²։

Արդեն 1799 թ. ապրիլի 7-ին Հովհաննես Հազարյանի հանձնարարությամբ Պետերբուրգում գտնվող Գրիգոր վարդապետ Տեր-Ստեփանյան Արարացին կազմում է ապագա ձեմարանի առաջին կանոնադրությունը³, որի հիմնական սկզբունքներով էլ հետագայում առաջնորդվեց Հազարյան ձեմարանը։ Եթե մինչև այդ հայկական դպրոցները գտնվում էին հոգևորականության ձեռքին և նպատակ էին հետապնդում եկեղեցական դոգմիչներ պատրաստել, ապա Հազարյանների կողմից հիմնվելիք դպրոցը պետք է առավել առաջնահերթ խորհրդների բավարարություն տար։ Հազարյանները, և հատկապես Հովակիմ Հազարյանը, գտնում էին, որ հարկադրել ուսանողներին կրոնավորություն, նշանակում է զրկել զգոցավորոյն յաստուածատուր շնորհաց, զոր պարգեհի է տէր վասն հասարակաց, և ոչ թե միայն կրոնաւորաց⁴։

Հովակիմ Հազարյանը դիտակցում էր և հասկանում, որ գիտությունը պետք է դուրս դա վանքի շրջափակից, դառնա ընդհանուրի սեփականություն, որ ժողովրդին պետք չէ զրկել լուսավորության ընձեռած բարիքներից։ Հայ իրականության մեջ, իր ժամանակի համար, սա մի խոշոր քայլ էր դեպի առաջ՝ գիտության շրջապագերծումը կրոնական կապանքներից, նրա աշխարհականացումը։

Մահր խանդարեց Հովհաննես Հազարյանին իրագործելու վաղեմի և նվիրական երազը։ Սակայն նրա կտակած գումարը և նրա անմիջական մասնակցությամբ ու ցուցումներով մշակված սկզբունքները հանդիսացան այն հիմքը, որի վրա պետք է հառներ ձեմարանի հոյակերտ շինվածքը։ Ավագ եղբոր ավանդները մեծ ջանասիրությամբ և մանրախնդրությամբ գլուխ բերեց Հովակիմ Հազարյանը՝ հայկական մշակույթի երախտավորներից մեկը։ Եվ եթե ձեմարանի բացումը բավականաչափ ձգձգվեց, ապա դա նրա մեղքը չէր, որովհետև դիտելով շուրջը և տեսնելով հուսահատեցուցիչ ամլությունը, նա ալեկեզ բացականչում էր. «բայց ո՞ր է վարդապետ կամ ուսուցիչ հայոց...»⁵։ Ժամանակի քաղաքական անցուղարձերը և հատկապես 1812 թ. ռուս ժողովրդի Հայրենական պատերազմը, Մոսկվայի գրավումը և հրկիզումը Նապոլեոն Բոնապարտի կողմից, պատճառ հանդիսացան, որպեսզի ձգձգվի ձեմարանի հիմնադրումը։ Սակայն 1813 թ. սկզբներից սկսվում է շենքի կառուցումը, որի մի մասն արդեն 1814 թ. պատրաստ էր։ Այդ նույն թվականի մայիսի 10-ին դրվում է շենքի կենտրոնական մասի հիմքը⁶։

¹ ЦГИАЛ, ф. 880, оп. 1, д. № 79, л. 94.

² Մատենադարան, Հազարյանների արխիվ, թղթ. 104, գործ N° 104, վավ. 3.

³ Նույն տեղում, վավ. 9.

⁴ Նույն տեղում, վավ. 19.

⁵ Նույն տեղում.

⁶ Նույն տեղում, գ. № 8, վավ. 35.

Սակայն Հովակիմ Հաղարյանի առաջնահերթ հոգսը մնում էր ուսուցիչների և հատկապես հայոց լեզվի ուսուցչի հարցը: Իր հերթին նա էլ է դիմում Սևտվածատուր արքեպիսկոպոս Բաբիկյանին, այնուհետև Փարիզում գտնվող Շահան-Ջրպետյանին, հրավիրում ուսուցչության, բայց պատերազմը երկար ժամանակ ընդհատում է կապը նրանց հետ: Այդ նույն նպատակով նա 1813 թ. Աստրախանից հրավիրում է 17-ամյա Հարություն Ալամդարյանին, որը Մոսկվայում շարունակում է իր կրթությունը, ուսումնասիրում է լատիներեն, ֆրանսերեն, տրամաբանություն, ֆիզիկա, մետաֆիզիկա և Հաղարյանի հանձնարարությամբ սկսում է պարապել մի խումբ աշակերտների՝ ճեմարանի ապագա սաների հետ, դառնալով, այդպիսով, Հաղարյան հոշակավոր ճեմարանի առաջին ուսուցիչը:

Արդեն 1815 թ. ճեմարանում սկսվում են կանոնավոր պարապմունքները, իսկ մի տարի անց կարնեցի Սերովբե վարդապետը նշանակվում է ճեմարանի առաջին ռեկտորը: Այդ նույն 1816 թ. ավարտվում է ճեմարանի շենքի ամբողջական կառուցումը:

Հարություն Ալամդարյանը մեծ նվիրվածությամբ էր լծվել ապագա սերնդի կրթության շնորհակալ գործին: Ահա թե ինչպիսի կարծիք է հայտնել նրա մասին Ալեքսանդր Պուգաչովյանը. «եւ վասն Յարութին քահանային պարտիմ վկայել, որ դա ջանացողութեամբ իւրով ի կրթել զմանկունս, ոչ սակաւ արդիւնաւորութիւն խոստանայ առ պետոյն ազգագոյտ ուսումնարանի ձերում»⁷:

Նորաբաց ճեմարանի առաջին քայլերը ամենուր մեծ խանդավառություն, առաջացրեցին հայ հասարակության մեջ: Ինքը՝ Հովակիմ Հաղարյանը հետևյալ կերպ էր գնահատում ճեմարանի հիմնադրումը. եթե մինչև այժմ «իբր կորագլուխ էաք ի մէջ ազգաց և ազանց», ապա այժմ պատկերն այլ է, որովհետև Մոսկվայում դոյութիւն ունի հայկական դպրոց, «որ եթէ ոչ աւել պայծառ և գեղեցիկ քան վայազգևաց, սակայն գեթ նման նոցին և ոչ նուաստ, զոր այժմ ունիք և ի պէտս ուսման մանկանց ձերոց ներկայից և հեռակայից մերազնեաց պիտոյացուցանել և վայելել կարէք, զի ձեր է՝ սիրելի ազգիս հայոց»⁸:

Առաջին անգամ հայ իրականության մեջ ստեղծվում էր մի լիարժեք դպրոց, որը աշխարհիկ էր, մտնում էր բնական գիտությունների ուսուցում՝ դասական և եվրոպական լիզունների ուսուցմանը զուգընթաց: Հովակիմ Հաղարյանը քաջ գիտակցում էր, որ ճեմարանը կոչված է մեծ դեր խաղալու հայ ժողովրդի հոգևոր կյանքում և ջանք չէր խնայում գործը հաջողությամբ պսակելու համար: Այդ առթիվ նա գրում էր իր Հովհաննես և Խաչատուր որդիներին. «այս գլխավոր մի գործ է, օգտաւէտ և ազգային, ծախս և խարջ մեծ կրեմք, աշխարհ ամենայն ի մեզ հայի, մի գուցե գործն սկսեալ, ծախիւք աւերեալ, անկատար մնասցուք, և ի մէջ ազգաց և ազանց իւրոց և օտարաց՝ խայտառակեալ մնասցուք»⁹:

Ճեմարանի հիմնադրումով բոլոր հարցերը չէին, որ իրենց լուծումն էին ստանում: Անհրաժեշտ էր, որպեսզի ուսումնական հաստատությունը պաշտոնական ճանաչում գտներ լուսավորության մինիստրության կողմից, օժտվեր արտոնություններով: Միայն 1817 թ. ընթացքում Հովակիմ Հաղարյանը երիցս դիմեց լուսավորության մինիստրությանն այդ կապակցությամբ: Ըստ կանո-

7 Նույն տեղում, ս. N 3, վավ. 52:

8 Նույն տեղում, թղթ. 102, Գ. N 3, վավ. 120:

9 Նույն տեղում:

նադրության ներկայացված առաջին նախագծի, այն պետք է կոչվեր «Լազարյանների հայկական ճեմարան»: Բայց նման անվանումը տեղին չի համարվում, և նախագիծը մերժվում է: Մերժվում է նաև գիմնազիա անունը: Կառավարության նման վերաբերմունքը սոսկ զարմանք է առաջացնում Հովակիմ Լազարյանի մոտ: «Զարմանամ,— գրում էր նա որդիներին,— թէ դիաֆոդ դժուարանան խնդիր մեր կատարել, որ և ոչ մի կոպէկ գանձարանէն ծախս պահանջեմք»¹⁰:

Սակայն զարմանալի ոչինչ չկար: Ծեմարանը իր գոյության առաջին իսկ օրերից մտնում էր մի պայքարի մեջ, որը պետք է բնորոշեր նրա զարգացման ողջ ընթացքը՝ պայքար նրա ազգային նկարագիրը խաթարելու ցարական կառավարության բոլոր թարուն կամ ակնհայտ փորձերի ու ոտնձգությունների դեմ:

Անցնում են տարիներ, սակայն հարցի լուծումը մնում է առկախ: 1823 թ. Լազարյանների կողմից ներկայացվում է «Արևելյան լեզուների և բարձրագույն գիտությունների հայկական գիմնազիայի» կանոնադրության նոր նախագիծը: Քննարկելով այն, լուսավորության մինիստրության գիտական կոմիտեն (Ն. Ի. Ֆուա, Դ. Պ. Ռունիչ և Ի. Ս. Լավալ) գալիս է եզրակացության, որ անհնար է միևնույն ուսումնական հաստատության շրջագծում համատեղել երկու միմյանցից խիստ տարբեր նպատակադրումներ: Ինչ վերաբերում էր արտոնություններին, ապա գիտական կոմիտեն գտնում էր, որ պետք է տալ նահանգական գիմնազիաներին հավասար արտոնություններ:

Ստեղծված իրադրությունը թելադրում է Հովակիմ Լազարյանին յուրահատուկ զինախաղի դիմել: «Միտք ծագեց,— ինչպես գրում էր հետագայում Գ. Քանանյանը,— Լազարյան ուսումնարանը դնել ժամանակաշրջանի բարձր դիրք գրավող և ազդեցիկ պետական գործիչներից որևէ մեկի իշխանության և հովանավորության ներքո»¹²: Մ. Մ. Սպերանսկու թելադրանքով Լազարյաններն անձամբ և նփրեմ կաթողիկոսի միջոցով դիմում են Ալեքսանդր 1-ին. նրա ֆավորիտ Ա. Ա. Արակչենին, խնդրելով վերջինիս՝ իր հովանավորության տակ վերցնել ճեմարանը: Խնդրանքը ընդունվում է, և 1824 թ. նոյեմբեր ամսից Լազարյան ճեմարանը սկսում է համարվել «առանձին պետի ղեկավարության ներքո, որից էլ այդ պարագայում կախված է արդեն նույնպես և տվյալ հաստատության համար կանոնների մշակումը»¹³:

Անյուշտ, տխրահռչակ Արակչենը չէր այն անձնավորությունը, որ պետք է որևէ քիչ թե շատ նկատելի հետք թողներ ճեմարանի կյանքում: Նա ամենևին չէր խառնվում ճեմարանի ներքին գործերին, այնպես որ վերջինս կարողանում էր համեմատական ազատություն պահպանել:

1827 թ. լուսավորության մինիստր Ա. Շիշկովը կրկին մերժում է Լազարյանների նախագիծը և պահանջում երկուսից մեկը՝ ուսումնարանը դարձնել կամ հանրակրթական և կամ մասնագիտական: Սակայն ճեմարանի արդեն տասամյա բարեհաջող գոյությունը, ճեմարանի հիմնադիրների նոր դիմումը ստիպում են ուսումնական հաստատությունների կազմակերպման կոմիտեին

¹⁰ Նույն տեղում, վավ. 227:

¹¹ ЦГИАЛ, ф. 733, оп. 82, д. № 272, л. 111.

¹² «Речи и отчет, произнесенные в торжественном собрании Лазаревского института», Москва, 1865 г., էջ 23:

¹³ Նույն տեղում, էջ 24:

Հանձնարարել ակադեմիկոս Ա. Կ. Շտորխին, Ֆ. Ադելունդին և Խ. Դ. Ֆրենին կազմելու կանոնադրության նախագիծ:

Նույն 1827 թ. ճեմարանը վերանվանելով «Արևելյան լեզուների հայկական Հազարյան ինստիտուտ», լուսավորության մինիստրությունը այնուամենայնիվ չհաստատեց ակադեմիկոս Շտորխի և մյուսների կազմած նախագիծը, հետաձգելով այդ հարցի լուծումը մինչև կայսրության մյուս բոլոր ուսումնական հաստատությունների կանոնադրությունների ընդհանուր բարեփոխումը¹⁴:

Մինչ ճեմարանի կանոնադրության նախագծի հաստատման շուրջը այս պայքարն էր զնում, Անդրկովկասում տեղի էին ունենում իրադարձություններ, որոնք պետք է, քիչ ժամանակ անց, հիմնովին փոխեին կառավարության վերաբերմունքը դեպի Հազարյան ճեմարանը: 1826—28 թթ. ռուս-պարսկական պատերազմը, որն ավարտվեց Արևելյան Հայաստանի միակցմամբ Ռուսաստանին, կառավարության ուշադրությունը բեռեց Հազարյան ճեմարանի վրա, որպես մի հաստատության, որը կարող էր աստիճանավորներ պատրաստել Անդրկովկասում ծառայություն կատարելու համար: Շարժվելով իրեն յուրահատուկ դանդաղկոտությամբ, կառավարությունը սոսկ 1835 թ. ճեմարանը դասեց կայսրության երկրորդ կարգի ուսումնական հաստատությունների շարքը¹⁵: Մինիստրների կոմիտեի 1837 և 1839 թթ. կարգադրությունների համաձայն ինչպես ճեմարանի ուսուցչական կազմը, այնպես էլ մյուս պաշտոնեությունը, նույնպես և ճեմարանավարտները կարող էին օգտվել պետական երկրորդ կարգի ուսումնական հաստատություններին վերապահված իրավունքներից ու արտոնություններից: Ճեմարանն ավարտած սաները կարող էին այսուհետև մտնել զինվորական և քաղաքացիական ծառայության մեջ, ընդունվել համալսարան¹⁶:

1836 թ. «Պոլոժենիե»-ն փաստորեն սահմանափակում էր հայ եկեղեցու իրավունքները, այն դնում ցարական կառավարության հսկողության տակ: Թերևս այդ նույն նպատակները առավել ևս հաջողությամբ ապագայում կենսագործելու նկատառումով մինիստրների կոմիտեի և կայսեր կողմից 1841 թ. հունվարի 31-ին հաստատվեց Հազարյան ճեմարանին կից հատուկ հոգևոր բաժանմունք հաստատելու որոշումը, համաձայն որի հիշյալ բաժանմունքում հայ հոգևորականների 15—20 զավակներ, ի հաշիվ Հազարյանների հոգաբարձության ներքո գտնվող Մոսկվայի և Պետերբուրգի հինգ հայկական եկեղեցիների հատկացումների, պետք է կրթություն ստանային և նվիրվեին եկեղեցական գործունեության: Այդ նույն 1841 թ. բացվում է ճեմարանի հոգեվոր բաժանմունքը:

Ակնհայտ էր դառնում, որ ցարական կառավարությունը երկար ժամանակ ճեմարանի գոյությունը գրեթե անտեսելուց հետո, սկսել էր գործուն միջամտություն ցույց տալ ուսումնական հաստատության գործերին: Ճեմարանի հիմնական նպատակադրումներն էին արևելյան լեզուների թարգմանիչների և հոգևորականների պատրաստումը, մինչդեռ, ինչպես մենք արդեն վերևում տեսանք, նրա հիմնական նպատակը հիմնադիրների և մեկենասների կողմից համարվում էր հայ ազգի մեջ լուսավորության տարածումը, հետևաբար և սա-

¹⁴ МОГИА, ф. 213, оп. 1, д. № 5, л. 174.

¹⁵ ЦГИАЛ, ф. 880, оп. 5, л. № 168, л. 2.

¹⁶ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 21, վավ. 85ա:

ներին նախապատրաստելը համալսարան ընդունվելու և ուսուցչական գործին նվիրվելու: Այդ էր թերևս հիմնական շարժառիթը, որ ճեմարանի հոգաբարձու Հովհաննես և գիրեկտոր Խաչատուր Լազարյանները ճեմարանի խորհրդի միջոցով որոշում են հանում բացել նաև հինգերորդ բարձրագույն դասարան՝ ուսման ընթացքը ավելի ևս բարձր հիմքերի վրա դնելու, որպեսզի ճեմարանը թի վիճակի լինի առաջել հիմնավոր կերպով նախապատրաստելու իր սաներին ընդունվելու համալսարան»¹⁷:

Ցարական կառավարությունը շարունակում էր շոայել ճեմարանին իր ուշադրությունը: Նիկոլայ I մտադրություն է հայտնում իր հաշվին Լազարյան ճեմարանում պահել Անդրկովկասի բնիկներից 5 սաներ, հետագայում Անդրկովկասում գինավորական և քաղաքացիական ծառայության ուղարկելու համար: Ընթացիկ գլխավոր պետ Խ. Բենկենդորֆը, որը փոխարինել էր Արակ-չեկին այդ պաշտոնում 1828 թ., և հակառակ իր նախորդի չափազանց գործուն միջամտություն էր ունենում ուսումնական հաստատության գործերում, խիստ օգտակար և նպատակահարմար էր համարում կայսեր վերոհիշյալ մտադրումը¹⁸:

Եվ ահա «1843 թ., նորին կայսերական մեծության կամքով Անդրկովկասի բնիկներից Լազարյան ճեմարան նշանակվեցին հինգ աշակերտներ, որպեսզի նախապատրաստվեն ծառայության վերոհիշյալ երկրամասում»¹⁹: Կովկասյան սաներին, ինչպես սկսեցին կոչվել նրանք, ընտրում էր Անդրկովկասի կառավարապետը: Սա ևս մեկ ավելորդ ապացույց էր, որ ցարական կառավարությունը ձգտում էր ճեմարանն օգտագործել իր նպատակների համար:

Այս բոլոր փոփոխությունների հետևանքով Լազարյան ճեմարանը բավական կորցրեց իր նախկին նպատակաւաւացությունը, ստիպված եղավ ծառայել միմյանցից տարբեր և երբեմն էլ բոլորովին իրարամերժ խնդիրների: Այժմ ճեմարանը պետք է իր սաներին նախապատրաստեր համալսարան ընդունվելու, անդրկովկասյան երկրամասում ծառայելու համար աստիճանավորներ պատրաստեր, հայ պատանիներին բարոյական ու մտավոր սնունդ հայթայթեր և հայ եկեղեցու համար «լուսամիտ» հոգևորականներ պատրաստեր²⁰: Չնայած ցարական կառավարության ջանքերին, ճեմարանը շարունակում էր սաների համար ծառայել հիմնականում որպես մի գլխավոր միջոց համալսարան ընդունվելու, մի բան, որը չէր կարող չղձգահեցնել կառավարությանը: Ուստի 1848 թ. կազմվում է կանոնադրության նոր նախագիծ և ներկայացվում Կովկասյան կոմիտեի քննարկմանը: Լազարյան ճեմարանը բոլորում է իր գործունեության առաջին շրջանը:

Նախքան Լազարյան ճեմարանի գործունեության երկրորդ ժամանակաշրջանի պատմությանն անցնելը տանք այն հանրագումարները, որ նա ունեցավ առաջին ժամանակաշրջանում, այն է՝ 1815—1848 թթ.: Լազարյան ճեմարանը կոչված էր դառնալու յուրահատուկ հայկական համալսարան՝ «մայր դպրոց» և «սերմնարան հայոց դպրոցաց»: Ահա այս պարագայի մեջ է թաքնված Լազարյան ճեմարանի նշանակությունը հայ ժողովրդի պատմության նոր ժա-

¹⁷ МОГИА, ф. 213, оп. 1, № 26, л. 67.

¹⁸ ЦГИАЛ, ф. 733, оп. 82, л. № 1579, л. 1.

¹⁹ А. Зинovieв, Исторический очерк Лазаревского института восточных языков. СПб., 1855, т. 1, 50.

²⁰ ЦГИАЛ, ф. 880, оп. 5, л. № 166, л. 2.

մանակաշրջանի համար: Ծիշտ է, Հազարյան ճեմարանն, իր գոյության առաջին էտապում, չկարողացավ լիովին հաղթահարել հնի մնացուկները, բայց մեծամեծ ծառայություններ մատուցեց նորի հաստատման գործում: 726 սաներ են ուսանել Հազարյան ճեմարանում հիշյալ մամանկամիջոցում, որոնցից 112 հոգի շարունակել են ուսումը համալսարանում, 98 հոգի ճեմարանն ավարտելուց հետո սփռվել են հայաշատ այլևայլ վայրեր լուսավորություն տարածելու: Ծիշտ է, 373 սաներ տարբեր պատճառներով ստիպված են եղել կիսավարտ դուրս գալ ճեմարանի շեմքից, բայց և այնպես նրանք էլ իրենց համեստ լուման են մտցրել հայության մտավոր և ազգային զարթոնքի գործում²¹: Արդեն մենք հիշատակել ենք, որ ճեմարանի ուսուցչական կազմի փաղանգը բացեց Հարություն Ալամդարյանը, հայ նոր պոեզիայի հիմնադիրներից մեկը: Իր շուրջ տասամյա գործունեության ընթացքում Հազարյան ճեմարանում, չ. Ալամդարյանը աչքի ընկնող դեր խաղաց ոչ միայն իր ժամանակի համար առաջադեմ մանկավարժական գործունեությամբ, այլև դասագրքեր կազմելու ուղղությամբ: Դեռևս 1816 թ. նա կազմել էր ռուսերեն քերականության ձեռնարկ, որն այդպես էլ լույս չտեսավ, շնայած Ալամդարյանի թափած ջանքերին: 1821 թ. Մոսկվայում լույս տեսավ Ալամդարյանի «Համառոտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառը», որը մեծ դեր խաղաց ճեմարանի երբեմն ռուսերենից կամ ընդհակառակը, հայերենից գրեթե անտեղյակ սաներին օժանդակելու գործում: Դրանից դեռևս երկու տարի առաջ, 1819 թ. Մոսկվայում լույս էր տեսել ճեմարանի առաջին ռեկտոր Սերովբե վարդապետի «Ծաղիկ գիտութեանց ի պէտս դպրոցաց Հայաստանեայց, զարդարեալ 52 պատկերօք» դասագիրքը, որն ընդհանուր բնույթի տեղեկություններ էր պարունակում գիտության տարբեր ճյուղերի վերաբերյալ: 1822 թ. Սերովբե վարդապետին ռեկտորի պաշտոնում փոխարինած Միքայել Սալլանյանը նույնպես ձեռնածալ շնտես: 1827 թ. նա Մոսկվայում հրատարակեց «Քերականութիւն գրաբար լեզուի հայոց նորակարգ ոճով ի պէտս աշակերտաց գերահռչակ ճեմարանին կառուցելոյ ի Մոսկով ի պայազատադարմ Տեարց Եղիազարեանց» դասագիրքը, որը մի քայլ առաջ էր համեմատած Մ. Չամչյանի քերականության հետ և քիչ հուշակ շքերեց իր ստեղծողին: 1821 թ. Մոսկվայում լույս ընծայվեց Մանվել վարդապետ Գյումուշխանեցու «Դպրութիւն մանկանցը», 1827 թ. Վարդան Սարկավազի «Այբբենարանը» և Աբրահամ Աստվածատրյան Վաղարշապատցու «Համառոտ քերականութիւն ի ռուսաց լեզուէ ի հայ»-ը, 1831 թ. Սիմեոն Սուլթանշահյանցի «Գաղափար հայկական վայելչագրութեան» դասագիրքը, 1836 թ. Մ. Սալլանյանի «Հրահանգ ճարտարասանութեան կամ ճառաբանութեան ի պետս աշակերտաց բարձու դասատանը ազգայոյս ճեմարանի Հազարեան իշխանապետաց» ձեռնարկը, 1839 թ. Կ. Պոպովի «Նախադուռ վարժութեան»-ը, Գ. Սուքիասյանցի «Այբբենը հայոց և ռուսաց» և «Քերականութիւն հայկական լեզուի» դասագրքերը, 1846 թ. «Քերականութիւն հայկական լեզուի ի պետս աշակերտաց Հազարեանց ճեմարանի արևելյան լեզուաց» և այլն: Տպագրված դասագրքերի և ձեռնարկների այս համառոտ թվարկումն իսկ մի պերճախոս վկայություն է, թե Հազարյան ճեմարանի և ռուսահայ զաղթավայրերում այլ դպրոցների հիմնադրումով ինչպիսի արագ քայլերով էր ընթանում ուսումնական ձեռնարկներ ստեղծելու գործը: Այստեղից էլ Հազարյան ճեմարանի խոշոր նշանակությունը, որ նա ստացավ հայկական մյուս դպրոցների համար

21 ՀՍՍՍՒ Մատենագրարան, Հազարյանների արխիվ, թղթ. 112, գ. 42, վ. 36:

դասագրքեր ստեղծելու և հայթայթելու գործում: Ապահովված լինելով որակյալ ուսուցչական կադրերով և իր հերթին ժամանակաշրջանի խոպան անդաստանում դնելով լուսավորության կենսատու սաղմերը, Հազարյան ճեմարանը իսկույն ևեթ այնպիսի յուրահատուկ դիրք գրավեց արևելահայ իրականության մեջ (և ոչ միայն արևելահայ), որ մեկ հարյուրամյակ գրեթե պետք է եղանակ ստեղծեր հայկական կրթության ու լուսավորության ասպարեզում:

1840-ական թթ. ցարիզմը Անդրկովկասում անցավ ակտիվ գաղութային բաղադրականության: Հայկական մարզի վերացումը այդ երևույթի բազմապիսի արտահայտություններից մեկն էր, որով մեկնընդմիջտ վերջ էր դրվում բաղադրական այն աղոտ հույսերին, որոնք դեռևս թևածում էին հայկական երկնակամարում: 1846 և 1847 թթ. ճորտատիրական բնույթի միջոցառումներն այն հենքն էին, որոնց վրա պետք է ամրապնդվեր ցարիզմի տիրապետությունը վերջնականապես իր հետ կապելով արևելյան Անդրկովկասի հողատեր դասը: Այժմ առավել քան երբեք կարիք էր զգացվում կառավարությանն հավատարիմ պաշտոնեության, որը ցարիզմին իր նվիրվածության հետ մեկտեղ պետք է նաև ծանոթ լիներ տեղական լեզուներին ու սովորույթներին: Եվ Հազարյան ճեմարանը այն կրթական օջախն էր, որի վրա առաջին հերթին իր ուշադրությունը դարձրեց ցարական կառավարությունը՝ անհրաժեշտ կադրեր ստանալու համար: Եթե մինչև 1848 թ. արևելյան լեզուների ուսուցումը ճեմարանում գրեթե ձևական բնույթ էր կրում և բնավ չէր արդարացնում կառավարության «պասելիքները, որովհետև ճեմարանական սաների առաջագույն երազը մնում էր համալսարանում կրթությունը շարունակելը, ապա նախատեսվող վերակառուցմամբ պետք է վերջ դրվեր այդ երևույթին: Կովկասյան կոմիտեն, այդ իսկ նկատառումով, անհրաժեշտ էր գտնում ճեմարանը դարձնել լիցենյական տիպի առաջին կարգի ուսումնական հաստատություն, իսկ ճեմարանն ավարտողներին շնորհել այն բոլոր իրավունքներն ու արտոնությունները, որոնցից օգտվում էին ժամանակի մասնավոր ուսումնական հաստատություններից Դեմիդովյան, Ռիշելիեի և Բեզբորոդկոյի լիցենյան ավարտողները: Անհրաժեշտ էր համարվում նաև իրավաբանական ու առևտրական գիտելիքների ուսուցումը²²:

1848 թ. մայիսի 10-ին Նիկոլայ Առաջինը հաստատում է Կովկասյան կոմիտեի գործուն մասնակցությամբ պատրաստված Հազարյան ճեմարանի նոր կանոնադրության նախագիծը, որով ճեմարանը դասվում էր առաջին կարգի ուսումնական հաստատությունների շարքը: Ուսման տևողությունը սահմանվում էր ութ տարի, որից վեցը կազմում էր գիմնազիական բնդհանուր դասընթացը, իսկ վերջին երկու տարին արևելյան լեզուների մասնագիտական դասընթաց էր: Պահպանվում էր հոգևոր բաժանմունքը իր նախկին նպատակադրումով: Մասնագիտական դասընթացն ավարտած ուսանողները ստանում էին նույն իրավունքները, ինչ որ Պետերբուրգի համալսարանի արևելյան բաժանմունքն ավարտածները, այն է 12-րդ կարգի, որոշ դեպքերում անգամ 10-րդ կարգի աստիճաններ: Նոր կանոնադրության հիմնական նպատակն էր

²² «Семидесятипятiletне...», էջ 149-152:

ճեմարանավարտներին «արհեստականորեն ետ պահել համալսարան ընդունվելուց՝ պատենել կանգնեցնելով վերջինիս և ճեմարանի միջև»²³։ Արդեն 1849 թ. հաստատված նոր կանոնադրության լրացումները պարտավորեցնում էին բոլոր սաներին, բացառությամբ հոգևոր բաժանմունքում սովորողների, սեփական ընտրությամբ սովորել արևելյան լեզուներից որևէ մեկը՝ թուրքերեն, պարսկերեն կամ թաթարերեն-արաբերենի օգնությամբ։ Հայերը, վրացիները և թաթարները պետք է անպայման ուսանեին մայրենի լեզուն, իսկ կովկասյան սաները՝ տեղական լիզուները²⁴։

1851 թ. հիմնադրվում է ճեմարանի նախապատրաստական բաժանմունքը՝ ի հիշատակ խաչատուր Հազարյանի վաղամեռիկ Հովհաննես որդու, որտեղ տասնչորս երեխաներ Հազարյանների ծախսերով պետք է անհրաժեշտ պատրաստականություն ձեռք բերեին հետագայում արդյունավետ կերպով ճեմարանում ուսումը շարունակելու համար։

1849 թ. Հազարյան ճեմարանն է հրավիրվում Կազանի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Ստեփանոս Նազարյանցը, որի վրա էլ դրվում է արևելյան լեզուների դասընթացների ծրագրերի կազմումը գլխավորելու և հիշյալ լեզուների դասավանդման վրա հսկողություն տանելու պարտականությունը։

Կառավարությունը պորժում էր այնպիսի մտադրությամբ, որպեսզի արևելյան լեզուների դասավանդումը սահմանափակվի հիմնականում գործնական իմացությունների ուսուցմամբ, այն դեպքում, երբ Ստ. Նազարյանցը դիմում էր, որ պետք է այն ավելի լայն հիմքերի վրա դնել՝ ընդգրկելով նաև դրականության ու պատմության ուսումնասիրությունը։

Այս ժամանակաշրջանում լույս են տեսնում Զարմայր Մսերյանի, Ոսկան Հովհաննիսյանի, Ղ. Բուդաղյանի, Լ. Հազարեի թուրքերեն, պարսկերեն և թաթարերեն լեզուներին նվիրված դասագրքերն ու բառարանները, որոնք կոչված էին դյուրացնելու արևելյան լեզուների ուսուցումը և յուրացումը։

1850-ական թթ. ճորտատիրական հարաբերությունների անասելի չափերով սրված ճգնաժամը հանգեցրեց 60-ական թթ. ռեֆորմներին։ Ռեֆորմներից զերծ չմնաց նաև կրթական սիստեմը։ 1864 թ. նոյեմբերի 18-ին հաստատվեց գիմնազիական նոր կանոնադրությունը, որով քայլ էր կատարվում դեպի ռեալական ուսուցումը, որոշ չափով վերափոխվում էր գիմնազիաների խիստ կլասիկական բնույթը։ Հազարյան ճեմարանում նույնպես վերատեսուչ Ի. Կ. Բաբստի գլխավորությամբ կազմվում է հանձնաժողով՝ Դ. Քանանյանի, Ստ. Նազարյանի, Մ. Էմինի, Ն. Ս. Տիխոնրավովի և այլոց անդամակցությամբ՝ համապատասխան փոփոխություններ մտցնելու համար ճեմարանի բնույթի մեջ։ 1865 թ. հանձնաժողովը ավարտում է աշխատանքը և հանգում այն եզրակացության, որ ճեմարանի գիմնադրական բաժինը՝ յոթ դասարանով և ութ տարվա ուսուցմամբ, որտեղ պահպանվելու էր նաև հայոց լեզվի ու կրոնի դասավանդումը, պետք է համապատասխանեցվի 1864 թ. գիմնազիական ծրագրին, իսկ արևելյան լեզուների ուսուցումը՝ կենտրոնացվի մասնագիտական երեք բարձրագույն դասարաններում, որով ավելի պարզորոշ էր դառնալու ուսման պլանը²⁵։

²³ Նույն տեղում, էջ 18։

²⁴ «Исторический очерк Лазаревского института...», էջ 64։

²⁵ «Семидесятипятилетие...», էջ 31։

Ճեմարանի գիմնագիական դասարաններից աստիճանարար արևելյան լեզուների ուսուցումը սկսում է զուրս մղվել, սակայն մասնագիտական դասարաններում այն ընդլայնելու և լավագույն հիմքերի վրա դնելու համար ոչ մի միջոցառում չի կիրառվում: Ավելին, 1868 թ. ի. Հազարյանը ճեմարանի գլխավոր պետ Վ. Պ. Բուտկովին գրում է այն ոգով, որպեսզի ճեմարանը իր մահից հետո անցնի լուսավորության միսիոսություն, դերատեսչության տակ, դադարեցվի արևելյան լեզուների ուսուցումը, այսինքն լուծարքի ենթարկվի մասնագիտական դասընթացը: Այսպիսով, ճեմարանը պետք է դառնար սոսկական մի գիմնագիա, միայն այն տարբերությամբ, որ շարունակելու էր կրել Հազարյան անունը, պահպանվելու էր հայ աղքատ սաների թիվը և ունենալու էր պատվավոր հոգաբարձու²⁶: Փաստորեն դա նշանակում էր վերագրած դեպի նախնական նպատակադրումը՝ պատրաստել սաներին համալսարանական կրթության համար: Թեև ի. Հազարյանի վերահիշյալ մտադրությունը սկզբնական շրջանում բարձրագույն հավանության արժանացավ, բայց շուտով վերացվեց հատկապես Հազարյան ճեմարանի դասախոսական և ուսուցչական կազմի ճնշման տակ: 1870 թ. վերաբացվում են երկու տարի առաջ փակված մասնագիտական դասարանները:

Իր գործունեության 1848—71 թթ. ընդգրկող երկրորդ ժամանակաշրջանում Հազարյան ճեմարանը ևս դառնում է թատերաբեմ այն հուժկու պայքարի, որ մղվում էր նոր գրական լեզվի իրավունքները կյանքում հաստատելու համար: Եվ դրա մեջ վերջին դերը չէր խաղալու Հազարյան ճեմարանը իր առանձնահատուկ բնույթի պատճառով: Հայաբնակ տարբեր վայրերից հավաքված, ամենատարբեր բարբառներով խոսող հայ աշակերտության միջավայրում անպայման պետք է մշակվեր մի ընդհանուր խոսակցական լեզու, որը և հիմք դներ ապագա նոր գրական լեզվին:

Հազարյան ճեմարանի 1848—1871 թթ. ժամանակաշրջանի պատմությունը ցույց է տալիս, որ շնայած ցարիզմի բոլոր սադրանքներին՝ վերածելու այն մի պուլպրիկի՝ իր քաղաքական նպատակների իրագործման ճանապարհին՝ հանդիպեցին ձախողման: Այդ տարիներին էլ ճեմարանը շարունակում էր իր հիմնական ծառայությունը մատուցել հայկական մշակույթին, դնալով հայ հասարակական մտքի ավանգարդում: 1848—1871 թթ. ճեմարանի դասընթացն ավարտեցին 471 աշակերտներ, որոնցից 125-ը՝ մասնագիտական դասընթացը: Նման հարաբերակցությունը ինքնըստինքյան խոսում է այն մասին, որ ճեմարանը առաջին հերթին ծառայում էր այն նպատակներին, որի համար և նախապես ստեղծվել էր:

* * *

XIX դարի 60-ական թվականներին լիբերալիզմին արագ կերպով հաջորդեց ռեակցիան և ցարիզմն աստիճանաբար սկսեց նահանջել այն փոքրաթիվ և ամոթխած զինվորներից, որոնք կատարել էր ընդամենը մի քանի տարի առաջ՝ կասեցնելով ժողովրդական զայրույթի պոռթկումը: Ժողովրդական լուսավորության ասպարեզում դա արտահայտվեց 1871 թ. գիմնագիական նոր կանոնադրությամբ, որը մի քայլ ետ էր իր նախորդի համեմատությամբ: Բնական գի-

²⁶ ЦГАДА, ф. 1252, оп. 1, д. № 268, л. 5.

տությունների դասավանդումը մղվում էր վերջին պլան, իսկ դիմնագիտաներն ստանում էին խիստ կլասիկական գունավորում, որտեղ նախասլատությունը տրվում էր հին հունարեն և լատիներեն լեզուների ուսուցմանը: Դրեթե այդ նույն ելակետն ուներ 1872 թ. դեկտեմբերի 16-ին հաստատված Հաղարյան ճեմարանի նոր կանոնադրությունը, որով ճեմարանը մտնում էր իր գոյության վերջին ժամանակաշրջանը: Համաձայն նոր կանոնադրության, ճեմարանն ունենալու էր մեկ նախապատրաստական, յոթ դիմնագիտական և երեք մասնագիտական դասարաններ: Մասնագիտական դասարանները ինչպես իրենց ծրագրով, այնպես էլ ուսումնական դասընթացի կազմակերպմամբ համապատասխանում էին բարձրագույն ուսումնական հաստատության²⁷: Նախկին լիցեյական երկու դասարանների հիման վրա ստեղծված մասնագիտական դասարանների նպատակն էր մնում թարգմանիչներ և դիվանագիտական ծառայողներ պատրաստելը²⁸:

Նոր կանոնադրությամբ ճեմարանում կատարված հիմնական փոփոխություններից մեկն էլ այն էր, որ ճեմարանը, Հաղարյանների վերջին արուժառանգ հաշատուր աղայի մահից հետո անցնում է լուսավորության մինիստրությունից տրամադրության տակ, ուստի և վերացվում էր ճեմարանի գլխավոր պետի պաշտոնը, քանի որ վերոհիշյալ ակտով այն կորցնում էր իր իմաստը: Խաշատուր Հաղարյանի մահից վերջ էր դնում նաև հոգաբարձուի պաշտոնին, իսկ կանոնադրությամբ, և ըստ Խաշատուր Հաղարյանի ցանկության, պատվավոր հոգաբարձուի պարտականությունների կատարման անցնում էր նրա փեսան՝ իշխան Սեմյոն Դավիդովիչ Աբամելիքը, որն այսուհետև իր ազգանվանը կցելու էր նաև Հաղարյան տոհմանունը: Նոր հոգաբարձուն արդեն լիովին կտրված էր նաև հայ իրականությունից և չէր կարողանում այնպես նպաստել ճեմարանում հայկական ազգային ոգին պահպանելու այն ջանքերին, որը Խաշատուր Հաղարյանի մահից հետո ընկնում էր հայ պրոֆեսորա-ուսուցչական կազմի վրա: Այստեղից էլ այն ոտնձգությունները, որ սկսում են կատարվել XIX դարի վերջին և XX դարասկզբին, երբ ցարիզմի ազգային գաղութային քաղաքականությունը հատկապես խստանում է հայ ժողովրդի նկատմամբ և որի արդյունքը եղավ հայկական դպրոցների երկիցս փակումը: Սույն պարագան չէր կարող իր անդրադարձումը չունենալ Հաղարյան ճեմարանի վրա:

1905 թ. ռուսական հեղափոխությունը և դրան նախորդած ներքաղաքական հետզհետե սրվող պայքարը իր բավական ուժեղ արտահայտությունն է ունենում ճեմարանի ուսանողության վրա և նրանց ներգրավում է գործուն պայքարի մեջ: Այստեղ քիչ դեր չէր խաղում նաև ցարիզմի ազգային ճնշման քաղաքականությունը, որը խմորում էր պատանեկության մտքերը և նրանց նետում քաղաքական գործունեության հնոցը²⁹:

Հեղափոխության ճնշումից հետո ծավալված ռեակցիայի տարիներին, երբ հրկրում մոլեգնում էին սևհարյուրակային անսանձ հալածանքները, Հաղարյան ճեմարանը ևս թիրախ է դառնում սևհարյուրակային մամուլի լպիրշ հար-

27 А. П. Б а з и я н ц, Лазаревский институт восточных языков, Москва, 1959, էջ 25:

28 «Устав специальных классов Лазаревского института восточных языков», Москва, 1872, էջ 2:

29 Տե՛ս Ա. Ի գ ն ա տ յ ա ն, Ուսանողական շարժումները Մոսկվայի արևելյան լեզուների Հաղարյան ճեմարանում 1905—1907 թթ. («Թանրեր Հայաստանի արխիվներին», № 3, 1963, էջ 163—177):

ձևակամների համար: Լազարյան ճեմարանը դիտելով որպես ազգային դարձմունքի և շարժման մի օջախ, շարժում, որը միախառնվում էր համառուսաստանյան ընդհանուր հեղափոխական շարժմանը, սահարյուրակային մամուլը պահանջում էր լիկվիդացնել այն:

Մոսկվայի համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր Պ. Գրիգորյանովի դիրեկտորության տարիներին՝ 1911—1916 թթ., ավելի ու ավելի կատաղի են դառնում ուսնձգությունների ճեմարանի ազգային կերպարանքը հղծելու ուղղությամբ: Վերացնելով այն սահմանափակումը, որ կիրառվում էր հրեաների նկատմամբ ճեմարան ընդունվելու հարցում, Գրիգորյանովը պնդում է վերջինս լցնել հրեաներով: Այդ հրեույթը այնպիսի չափսեր և այնպիսի ընդգծված բնույթ է կրում, որ բողոք է առաջ բերում պատվավոր հոգաբարձու Ս. Ս. Աբամելիք-Լազարևի մոտ: Վերջինս հարկադրված է լինում 1916 թ. դիմել նիկոլայ երկրորդ ցարին՝ բողոքելով ճեմարանի ողջ էությունը հակասող, նրա ազգային ոգին խաթարող ուսնձգությունների դեմ, երևույթ, որը նրա կարծիքով Լազարյան ճեմարանը տանում էր դեպի կործանում³⁰:

1914 թ. բռնկած առաջին համաշխարհային պատերազմը իր խիստ բացասական անդրադարձումը ունեցավ նաև Լազարյան ճեմարանի վրա: Վերջինս բնկնում է ֆինանսական խիստ ճգնաժամային կացության մեջ, քանի որ կառավարությունը հոգ էր տանում միայն ֆինանսավորելու մասնագիտական դասարանները, մինչդեռ գիմնադրական դասարանների նկատմամբ՝ դրանց վերացնելու մտադրություն էր տածում: Ս. Ս. Աբամելիք-Լազարևի բոլոր փորձերը բարվոքելու ճեմարանի ֆինանսական վիճակը Սարգիս արքեպիսկոպոս Լասան Զալալյանի կտակած դումարի հաշվին, հանդիպում են կառավարական մարմինների դիմադրությանը և կտրական մերժմանը³¹:

Իր գոյության վերջին շրջանում էլ Լազարյան ճեմարանը անգնահատելի ծառայություններ մատուցեց հայկական մշակույթին: Դեռևս այստեղ դասավանդում էին Ստ. Նազարյանը, Մկրտիչ էմինը, Սմբատ Շահազիզը, Գևորգ Քանանյանը, որոնք ջանք չէին խնայում անխաթար պահելու ուսումնական հաստատության ազգային ոգին ու ավանդությունները, այն բանի համար, որպեսզի կառավարության կողմից առանց այլևայլության ճանաչում գտնի այն պարագան, որ «Լազարյան ճեմարանը հիմնադրված է եղել հայ ընտանիքի կողմից, հայոց հրեխանների համար»³²: Այդ ժամանակաշրջանում ճեմարանավարտ սաներից ուսումնական հաստատությունում ուսուցչություն էին անում հայտնի հայագետներ Գրիգոր Խալաթյանը, Կարապետ Կուսիկյանը, Խաչատուր Քուչուկ-Հովհաննիսյանը, Լևոն Մսերյանը և ուրիշներ, որոնք պատկանելի ծառայություններ են մատուցել հայագիտության հետագա զարգացման գործին: Այդ տարիներին ճեմարանից ելան հայ քնարական պոեզիայի հիմնադիրներից Հովհաննես Հովհաննիսյանը, «Մթնշաղի անուրջների» և «Լեռնածաղի» հանճարեղ հեղինակ Վահան Տերյանը, ականավոր մանկավարժ Առաքել Բահաթրյանը, վաստակավոր բանասեր Երվանդ Շահազիզը, «Հանդես դրականականի և պատմականի» հրատարակիչ Մկրտիչ Բարխուդարյանը, հայտնի գրականագետներ Ցուլակ Խանդատյանը և Պողոս Մակինցյանը, հայտնի բյուզանդագետ և հայագետ Հովսեփ Կուսիկյանը, քննադատ Եղիշե Մուրադ-

³⁰ ЦГАДА, ф. 1252, оп. I, д. № 333, л. 1—4.

³¹ ЦГИАЛ, ф. 733, оп. 82, д. № 1213, л. 12 и об.

³² ЦГАДА, ф. 1252, оп. I, д. № 268, л. 62.

յանը, «Մուրճի» խմբագիր Լևոն Սարգսյանը, հրապարակախոս և քննադատ Գ. Զուրարը, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը և բազմաթիվ ուրիշ գրական և հասարակական խոշոր դեմքեր:

Սակայն միայն հայագիտությանը կատարած ծառայություններով չէ որ աչքի է ընկել Հազարյան ճեմարանը: Ինչպես ասացինք, 1872—1918 թթ. այստեղ գործել են մասնագիտական դասարաններ, որտեղ ուսումնասիրվել են արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հայերեն, վրացերեն, թաթարերեն, իսկ 1901 թ. նաև ուզբեկերեն³³, իսկ մինչև 1872 թ. Հազարյան ճեմարանը հանդես էր գալիս հիմնականում արևելյան վերոհիշյալ լեզուների պրոպագանդուղի դերում, իսկ գիտական առումով նրա պրոֆեսորական կազմից շատերը հեղինակեցին այս կամ այն լեզվի դասագիրքեր, ապա իր գործունեության 1872 թ. հետո ընկած ժամանակաշրջանում ճեմարանը խոշորագույն ծառայություններ մատուցեց արևելագիտության գիտական ուսումնասիրությանը և մշակմանը Ռուսաստանում: Արևելագիտության աշխուժացումը Հազարյան ճեմարանում հատկապես կապված է XIX դարի վերջի և XX դարի սկզբի հետ, երբ գիտական գործունեությունը սկսում է լայն ծավալ ստանալ, դարձնելով ուսումնական հաստատությունը Ռուսաստանի արևելագիտական մտքի խոշոր կենտրոններից մեկը: Առանձնապես այդ երևույթը խիստ ակնառու է դառնում խոշորագույն կովկասագետ և իրանագետ, կայսերական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆ. Վ. Ֆ. Միլլերի դիրեկտորության տարիներին (1897—1911 թթ.): Միլլերը չափ չէր խնայում ընդլայնելու արևելյան լեզուների և արևելքի ժողովուրդների կուլտուրական ծառանգության խոր ուսուցումը: Այդ նպատակով էլ նա ճեմարանում մտցնում է համեմատական լեզվաբանության, ազգագրության և պալեոլիթների ուսուցումը, որպեսզի ուսանողներին հիմնավոր գիտելիքներ մատակարարվեն: Միաժամանակ կազմվում է մի շարք ուսումնական ձեռնարկներ, որտեղ հիմնավոր կերպով շարադրվում է արևելքի տարբեր երկրների պատմությունը: Այսպես, 1904 թ. ճեմարանի նախկին սան, ապա պրոֆեսոր, հետագայում սովետական հայտնի արևելագետ Ա. Ն. Կրիմսկին հրատարակում է «Մուսուլմանության պատմությունը», 1908 թ. «Պարսկաստանի պատմությունը», իսկ 1910 թ. «Թուրքիայի պատմությունը» վիմատիպ ձեռնարկները: Նրա գրչին են պատկանում «Իսլամի պատմությունը», «Աեմիտական լեզուների տեսություն», «Արաբների պատմություն», «Արաբ գրականության պատմություն», «Թուրք գրականության պատմություն» աշխատությունները: Այս աշխատությունները, ինչպես նաև Վ. Ֆ. Միլլերի, ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկու, Ն. Ի. Աշմարինի, Մ. Ա. Գաֆարովի, Միրզա Զաֆարի (Ա. Զ. Տեր-Զաքարյան) և ճեմարանի այլ սաների ու պրոֆեսորների արևելագիտական բնույթի հետազոտություններն ու ուսումնասիրությունները լույս են տեսնում սկսած 1899 թ. Հազարյան ճեմարանի ուսուցչա-դասախոսական կազմի նախաձեռնությամբ հրատարակող «Արևելագիտական աշխատություններ» սերիայով:

Միաժամանակ շարունակվում էր դասագրքերի և գործնական այլ ձեռնարկների հրատարակումը: Արաբական բանասիրության ամբիոնում այդ հմաստով խիստ արդյունավետ աշխատանք է կատարել Մ. Աթայան (1852—1924 թթ.): «Արաբերեն-ռուսերեն բառարանի» հեղինակը: Նրա գրչին պատկանող «Արաբերեն լեզվի ուսումնասիրության գործնական ուղեցույցը» վերա-

³³ МОГНА, ф. 213, оп. I, л. № 641, л. 27.

հրատարակվել է երեք անգամ (1884 թ.՝ Կաղան, 1900 և 1910 թթ.՝ Մոսկվա), նա մեծ ծառայություններ ունի նաև մարքսիստական գրականությունը արաբերեն թարգմանելու գործում: Աթալյան է արաբերեն թարգմանել «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», «Ինտերնացիոնալը», ինչպես նաև «Քաղաքական բացատրական բառարանը»:

1882—1891 թթ. պարսից բանասիրության ամբիոնը ղեկավարում էր Սաազիի «Գուլեսթանի» թարգմանիչ և երկհատոր «Ուրվագծեր արաբական գրականության պատմություն» աշխատության հեղինակ պրոֆ. Ի. Ն. Խոլմոգորովը (1825—1891 թթ.): Գործնական պարսկերենի ուսուցիչ Միրզա Ջաֆար Տեր-Ջաբարյանը գրեց «Պարսկերեն լեզվի գործնական ուղեցույց» ձեռնարկը: Միրզա Աբգուլա Գաֆարովը հեղինակել էր «Պարսկական գրչության տեսականները» և կազմել «Պարսկերենի քրեստոմատիա» ձեռնարկները: 1871—1889 թթ. վրացերեն լեզու էր դասավանդում Ի. Լ. Օկրոմչեդելով-Սերբերյակովը, որին փոխարինեց հայտնի վրացագետ Ա. Ս. Խախանովը:

Վերջապես պետք է նշել, որ 1887 թ. Մոսկվայի հնագիտական ընկերության կողմից ստեղծված Արևելյան հանձնաժողովի աշխատանքներում, որի քարտուղարն է երկար ժամանակ եղել Ա. Ն. Կրիմսկին, ամենագործունյա դեր էր խաղում և մասնակցություն ունենում Լազարյան ճեմարանը:

Արևելագիտության պրոպագանդման գործում փոքր դեր չխաղացին նաև 1886 թ. հիմնադրված երեկոյան դասընթացները, ուր ուսանել կարող էին ցանկացողները՝ յուրաքանչյուր առարկայի համար վճարելով տարեկան հինգ ռուբլի: Երեկոյան ունկնդիրների մեծագույն մասը Մոսկվայի համալսարանի ուսանողներն էին: Դասատախտակն այնպես էր կազմված, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենային հաճախելու ճեմարանի մասնագիտական դասարանի դասախոսություններին³⁴:

Վերևում նշված խոշորագույն արևելագետներից բացի Լազարյան ճեմարանում են ուսանել նաև Ա. Ա. Սեմյոնովը, Ն. Կ. Դմիտրիևը, Վ. Մ. Նասիլովը, Ա. Ա. Ստարիկովը, Խ. Կ. Բաբանովը, Բ. Վ. Միլլերը և ուրիշներ, որոնք ևս քիչ ծառայություններ չեն մատուցել Ռուսաստանում արևելագիտության զարգացման գործին:

Վերոհիշյալ փաստերը համոզիչ կերպով ցույց են տալիս այն խոշոր ավանդը, որ ունեցել է Լազարյան ճեմարանը Ռուսաստանում արևելագիտության զարգացման ասպարեզում, այդպիսով դուրս գալով համեմատաբար նեղ ազգային շրջանակներից դեպի համամարդկային գործունեության ասպարեզ և իր պատվավոր տեղը գրավելով ուսումնական ու գիտական այն հիմնարկների փաղանգում, որոնք խոշոր դեր են խաղացել գիտության և լուսավորության զարգացման բնագավառում:

Ճեմարանի ուսանողության և ուսուցչական կազմի առաջադիմորեն տրամադրված մասը ուրախությամբ ողջունեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ հիմնովին վերափոխման էր ենթարկվում ժողովրդական կրթության հին սիստեմը, հարկ է համարվում վերակառուցել նաև Լազարյան ճեմարանը: Մինչև ճեմարանի վերակառուցման իրագործումը և նոր կանոնադրության մշակումը Հայկական գործերի կոմիտե-րիատի կոլեգիան Պողոս Մակինցյանին նշանակում է ճեմարանի կոմիտարի

³⁴ МОГИА, ф. 312. оп. 1, л. № 603, л. 40.

Կազմվում է ճեմարանի կանոնադրության մշակման հանձնաժողով ակադեմիկոս Ն. Մառի նախագահությամբ: Ըստ այդ հանձնաժողովի կազմած նախագծի՝ առաջին պլանի վրա էր մղվում հայագիտության զարգացումը, բայց անտեսվում էին նոր դպրոցի հիմնական պահանջները, այնպես որ այն հավանության չարժանացավ լուսավորության ժողկոմատի բարձրագույն ուսումնական հաստատությունների վերակառուցման հանձնաժողովի կողմից: Ուստի այդ գործը հանձնարարվեց Հայկական գործերի կոմիսարիատին, որի կազմած հանձնաժողովը (Տեր-Օզանեսով, Պ. Մակինցյան, Վ. Տերյան, պրոֆեսորներ՝ Կ. Կոստանյան, Ա. Ներսիսյան, Ա. Կրիմսկի, Լ. Մսերյան), հակառակ որոշ տարակարծությունների, եկավ այն եզրակացության, որ Լազարյան ճեմարանը պետք է դառնա պետական պրոլետարական դպրոց, որտեղ և պետք է կենտրոնացնի ոչ միայն Հայաստանի ուսումնասիրությունը, այլև Հայաստանի պրակտիկ գործիչների պատրաստումը: Նշանակվում է կանոնադրության մշակման հանձնաժողով Վ. Տերյանի նախագահությամբ³⁰:

Հանձնաժողովի կազմած նախագիծը ներկայացվում է ՌՍՖՍՌ Ժողկոմսովետի հաստատմանը: Ժողկոմսովետի 1919 թ. մարտի 4-ի Վ. Ի. Լենինի «տորագրությունը կրող դեկրետով» («Դեկրետ Մոսկվայում գտնվող Հայկական ինստիտուտի մասին») ստեղծվում է Հայկական ինստիտուտ, որը կազմված էր լինելու աշխատանքային առաջին և երկրորդ աստիճանի միացյալ դպրոցներից, ինչպես նաև երկու ֆակուլտետից՝ պատմա-բանասիրական և հասարակագիտական: Դպրոցական բաժնում ուսուցումը տարվելու էր հայերեն լեզվով, իսկ ֆակուլտետներում՝ հայերեն և ռուսերեն: Ինստիտուտը գտնվելու էր Հայկական գործերի կոմիսարիատի և ՌՍՖՍՌ լուսժողկոմատի ենթակայության ներքո: Ինստիտուտից հեռացվեցին բուրժուա-պահպանողական տարրերը: Շուտով վերջինս վերակառուցվեց որպես Առաջավոր ասիական ինստիտուտ, քիչ անց Կենդանի արևելյան լեզուների կենտրոնական ինստիտուտ, իսկ 1921 թ. Մոսկվայի արևելագիտության ինստիտուտ: 1921 թ. նոյեմբերի 17-ի Համկենտգործկոմի դեկրետով և ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ հայագիտությունը կարող էր ավելի հաջող զարգանալ հանրապետության մեջ, նախկին Լազարյան ճեմարանը վերանվանվում է Սովետական Հայաստանի կուլտուրայի տուն և բոլոր նյութական ու մշակութային արժեքներով հանձնվում Հայաստանի բանվորա-գյուղացիական իշխանությանը: Ներկայումս Լազարյան ճեմարանի շենքում տեղավորված է ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների պատմության ինստիտուտը:

ЛАЗАРЕВСКИЙ ИНСТИТУТ ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ

(К 150-летию со дня основания)

Р е з ю м е

Основанный в 1815 г. в Москве, Лазаревский институт восточных языков на протяжении ста лет своего существования сыграл важную роль в развитии армянской культуры нового времени. Однако, будучи

35 Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244, վավ. 307:

учрежденным для распространения знаний среди армянского юношества и, тем самым, являясь ярким выражением пробуждения национального самосознания армянского народа, Лазаревский институт не остался в тесных национальных рамках, а вышел в более широкую сферу деятельности, оказывая неоценимые услуги развитию востоковедческой науки, процветанию востоковедения в России.

Вся история Лазаревского института — это борьба двух тенденций. В то время, когда правительственные круги царской России стремились превратить его в орудие для осуществления своих внутри- и внешнеполитических задач, прогрессивно настроенная часть студенчества и профессорско-преподавательского состава выступала против этих попыток правительства, видя главное назначение института в осуществлении целей, указанных его основателями.

За годы существования Лазаревского института из его стен вышла целая плеяда блестящих представителей культуры, науки, просвещения и революционного движения. Воспитанниками Лазаревского института были знаменитые армянские поэты — Смбат Шахазиз, Рафаел Патканян, Ваан Терян, Иоаннес Иоаннисян, крупные арменоведы — Мкртыч Эмин, Григор Халатян, Левон Мсерянц, К. Мелик-Оганджян, Иосиф Кусикян, видные русские востоковеды — академики А. Е. Крымский, В. А. Гордлевский, а также Н. И. Ашмарин, А. А. Семенов, Н. К. Дмитриев, В. М. Насилов, А. А. Стариков, Х. К. Баранов, Б. В. Миллер, выдающиеся деятели революционного движения — Александр Мясникян, Р. Катанян и др. Этот неполный перечень ясно показывает, насколько велика заслуга Лазаревского института в истории культуры и науки нашей страны.